«Հաստատում եմ»
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտոր,
տեխն. գ. դ. պրոֆեսոր՝ _____ Ռ. Ռ. Սահակյան

«18» 10 2021 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Միշա Վարուժանի Թադևոսյանի «Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» խորագրով ԺԳ 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Միշա Վարուժանի Թադևոսյանի «Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 6, կայացած՝ 08.10.2021թ.):

Մասնակցում էին Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ. դոցենտ Լ. Բաղդասարյանը, ամբիոնի աշխատակիցներ՝ մ.գ.դ. պրոֆեսոր Պ. Գևորգյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Հ. Ավագիմյանը, Վ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը, Մ. Շահվերդյանը, Ա. Ղազարոսյանը, ասիստենտ՝ հ.գ.թ. Վ. Եղիազարյանը, մ.գ.թ. դոցենտներ՝ Ա. Հովհաննիսյանը, Ա. Հարությունյանը, Զ. Գրիգորյանը, ասիստենտներ՝ մ.գ.թ. Ն. Ներկարարյանը, Լ. Մարուքյանը, դասախոսներ՝ Տ. Մալումյանը, Լ. Դանիելյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Հովսեփյանը:

Ատենախոսության մեջ համակողմանի քննվել և ուսումնասիրվել է պենիտենցիար մանկավարժության՝ որպես մանկավարժական գիտության առանձին ուղղության ձևավորումն ու զարգացումը: Հեղինակը հետազոտվող հարցի տեսական խորը ուսումնասիրություններ է իրականացրել՝ համակարգելով իրավական փաստաթղթերի,

ՔԿՀ-ներում կրթության միջազգային, տարածաշրջանային և ազգային պրակտիկայի վերլուծությունը:

Ատենախոսական աշխատանքը կազմում է համակարգչային 155 էջ: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև կից ներկայացվող հավելվածներից:
Ներածության մեջ հստակ հիմնավորված է արդիականությունը, գիտականորեն ձևակերպված են ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները: Հետազոտության լեզուն և ոճը համապատասխանում է գիտական հետազոտությանը առաջադրվող հիմնական պահանջներին:

Միշա Թադևոսյանը ատենախոսության առաջին գլխում՝ «Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության իրավունքի իրացումը», անդրադարձել է պենիտենցիար մանկավարժության՝ որպես մանկավարժական գիտության առանձին ոլորության ձևավորմանն ու զարգացմանը, ուսումնասիրել և ներկայացրել է ՔԿՀ–ներում կրթության իրավունքի իրացմանն առնչվող եվրոպական և տարածաշրջանային փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման հիմնական մոտեցումները:

Անդրադարձել է նաև ՔԿՀ–ներում վերադաստիարակության նպատակի վերաբերյալ մոտեցումներին (Ա. Մակարենկո, Վ. Նիկիտինա, Ի. Ֆրումինա, Վ. Վասիլկովա և այլն): Ատենախոսն ամբողջական և համակողմանի ուսումնասիրել է ՀՀ կրթության բնագավառի հիմնական իրավանորմատիվային հիմքերը՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը (1990թ), «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը (2004 թ), «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը (2009թ) և ՀՀ ՔԿՀ –ներում պատիժ կրող անձանց իրավունքներին և պարտականություններին առնչվող իրավանորմատիվային հիմքերը:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման պրակտիկան», ատենախոսը ներկայացրել է քրեակատարողական համակարգում միջազգային օրինակելի մոդել հանդիսացող սկանդինավյան երկրների՝ Դանիայի, Նորվեգիայի և Շվեդիայի ՔԿՀ-

ներում կրթության կազմակերպման պրակտիկան: Անդրադարձ է կատարվել նաև ՔԿՀ-ներում նախախորհրդային և հետխորդային ժամանակաշրջանում ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման քաղաքականությանը և պրատիկային: Առանձնահատուկ կարևորվել և ներկայացվել է հետխորհդային երկրներից Բելառուսի, Մոլդովայի, Ուկրաինայի փորձառությունը:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «ՀՀ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման առաջարկվող համակարգը», հանգամանորեն լուսաբանված է ՀՀ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա վիճակը:

Ատենախոսության մեջ վերլուծված են ՀՀ 5 ՔԿՀ- ներում՝ «Արմավիր», «Աբովյան», «Կոշ», «Սևան» և «Վարդաշեն» իրականացված հարցաթերթիկային հարցումների արդյունքների հիման վրա վերհանված կրթության կազմակերպման առկա իրավիճակի հիմնախնդիրները: Վերջինների հիման վրա մշակվել է ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կառավարման և կազմակերպման համակարգի երկու մոդել, որոնք տրված են գծապատկերներով: Աշխատանքում հիմնական շեշտը դրված է այն փաստի վրա, որ կրթության միջոցով է հնարավոր իրականացնել պատիժ կրող անձի վերադաստիարակությունն ու վերասոցիալականացումը, կանխարգելել կրկնահանցագործությունը և այս ամենով նպաստել հասարակության հումանացմանը:

Աշխատանքում մանրամասն ներկայացվել են այսօր ՔԿՀ–ներում կրթության արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտող հիմնահարցերը: Ատենախոսը առանձնակի կարևորել է պատիժ կրող անչափահասների կրթության կազմակերպումը՝ նշելով, որ նրանց նկատմամբ կարելի է կիրառել հատուկ մոտեցումներ և հնարավորության պարագայում նրանց ուսումնառությունը կազմակերպել քրեակատարողական համակարգից դուրս՝ համայնքում գտնվող ուսումնական հաստատությունում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարված գիտական աշխատանքը, նրա կարևորությունն ու տեսագործնական արժեքը, հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Աշխատանքն առավել կշահեր, եթե 2-րդ գլխի 2.2 և 2.3 ենթագլուխները ներկայացվեին միավորված:
2. Աշխատանքում կան մտքերի կրկնություններ:
3. Ատենախոսը չի օգտագործել գրականության ցանկում նշված մի շարք աղբյուրները, մասնավորապես օտարալեզու:
4. Աշխատանքում կան համակարգչային վրիպակներ, էջ 23, 44, 88, 128:

Վերոնշյալ նկատառումները չեն ազդում ատենախոսության արժեքի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունը ու հետևությունների հիմնավորումը թույլ են տալիս եզրակացնել, որ Միշա Վարուժանի Թադևոսյանի «Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» թեմայով ատենախոսությունը ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսը արժանի է գիտական աստիճանի շնորհման:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,
Մ. գ. թ., դոցենտ՝ _____ Լ. Գ. Բաղդասարյան

Լ. Գ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ
ՎՊՀ-ի գիտ. քարտուղար,
Մ. գ. թ., դոցենտ՝ _____ Ս. Ս. Բեժանյան